ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԷԴԻԿ ԲԱՐՄԵՂՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴԻԿ ԲԱՐՄԵՂԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանի հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն Բարսեղեան,

Տիրոջ կամքով Ձեզ անձնապէս ճանաչելու առիթ ենք ունեցել եւ բազում անգամներ գոհունակութեամբ ականատես եղել Ձեր որդիական անսակարկ սիրուն ու ծառայասիրական պատրաստակամութեանը՝ հանդէպ Մայր Եկեղեցին եւ համազգային մեր նուիրական սրբավայր լուսաւորչապսակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Բարձր ենք գնահատում, որ Մայր Հայրենիքում հոգեւոր վերազարթօնքի այս շրջանում Դուք յամենայնի օգնական ու աջակից էք Սիւնեաց թեմի բարեջան հոգեւոր դասին՝ ի խնդիր Մայր Եկեղեցու Տիրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացման: Շնորհիւ Ձեր օժանդակութեան, ղողանջում են զանգերը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու, որը Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական տարում աստուածահաճոյ գեղեցիկ ընծայ եղաւ բարեպաշտ մեր ժողովրդին: Սիւնեաց աշխարհի հնագոյն եւ աւանդոյթներով հարուստ Կապան քաղաքի բարեպաշտ հաւատացեալները երախտագէտ աղօթքով ու օրհնութեամբ են յիշում

Ձեզ եւ Ձեր աջակցութիւնը, որով կառուցուեց եւ թարգմանիչ սուրբ վարդապետի անունով օծուեց վեհաշուք սրբավայրը:

Մեծարգոյ պրն Բարսեղեան, Ձեր եկեղեցաշէն ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք Սիւնեաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանի ազնիւ խնդրանքին եւ շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ երկար կեանք եւ երկնատուր ամենայն բարիք, որպէսզի Դուք հայրենապաշտ ոգով ու եկեղեցանուէր գործերով շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 110